

ՄԱԼՈՒՄՅԱՆ ՎԻԳԵՆ ՀԱՅԿԻ ԾՆՆԴՅԱՆ 90 ԱՄՅԱԿ

Մարտ 2022



- Մալումյան Վիգեն Հայկի Ֆիզ.Մաթ.Գիտ.Դոկտոր – Պրոֆեսոր
- Ծնվել է 11 Մարտ 1932թ. Երևան քաղաքում
- Մահացել է 2013թ.

- 1954թ. Ավարտել է Երևանի Պետական Համալսալանի ֆիզ.-մաթ. ֆակուլտետը և այդ թվականից աշխատել է Բյուրականի Աստղաֆիզիկական Աստղադիտարանում:
- Եղել է՝
- Բյուրականի աստղադիտարանի Առաջատար գիտական աշխատող
- Երևանի Պետական Համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի դասախոս
- ԲԱ գիտ. խորհուրդի անդամ
- ԲԱ-ի գիտական աստիճաններ շնորհող գիտական խորհուրդի անդամ
- Միջազգային Աստղագիտական Միության (IAU), Եվրոպական Աստղագիտական Ընկերության (EAS) և Հայկական Աստղագիտական Ընկերության (ArAS) անդամ
- Նեղ մասնագիտացումը՝ ռադիոգալակտիկաներ, պարուրաձև գալակտիկաների ռադիո հատկություններ

- 1955-1959թթ Մալումյանը սովորել է ասպիրանտուրայում և 1963թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա Երևանի Պետական Համալսարանում
- Ատենախոսության թեման՝
- Բարձր լուծունակության ռադիոդիտակների միջոցով որոշ գալակտիկական ռադիոաղբյուրների 33սմ-ում դիտումների արդյունքներ:
- Նրա գիտական ղեկավարը հայտնի ռադիոաստղագետ Սեմյոն Էմանուիլովիչ Խայկինն էր:
- Խայկինը եղել է նաև ԲՍՀՄ-ի համարյա բոլոր ավագ ռադիոաստղագետների (Սանամյան, Թովմասյան, Միրզաբեկյան) թեկնածուական ատենախոսությունների ղեկավարը:

- Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը Մալումյանը ստացել է 1991թ. Բյուրականի աստղադիտարանում
- Ատենախոսության թեման`
- Չափավոր ակտիվությամբ և թույլ ռադիոգալակտիկաների ռադիոնառագայթման ուսումնասիրություն:

- Մալումյանի հիմնական գիտական հետաքրքրություններն ընդգրկում են՝
- Միայնակ և կրկնակի գալակտիկաների, գալակտիկաների խմբերի, ռադիոգալակտիկաների, քվազարների և այլ ռադիո աղբյուրների ուսումնասիրությունները ինչպես ռադիո, այնպես էլ այլ ալիքային տիրույթներում:
- Այս և որոշ այլ թեմաներով Մալումյանը ունի ավելի քան 90 տպագրված գիտական աշխատանքներ տարբեր գիտական հանդեսներում, որոնց վրա կան բազմաթիվ հղումներ:
- Նա զեկուցումներով հանդես է եկել բազմաթիվ միջազգային գիտաժողովներում:

- Բյուրականի աստղադիտարանում ռադիոաստղագիտությունը սկսեց զարգանալ 1950-ականների սկզբից, սկզբում ստեղծվեց ռադիոաստղագիտության լաբորատորիա, որը 1955-ին դարձավ ռադիոաստղագիտության բաժին:
- Կառուցվեցին ռադիոդիտակներ, որոնք աշխատում էին երկար ալիքներում:

sphere.




Fig. 1. One of the antennas of the first BAO radio interferometer (4.2m wavelength).




Fig. 2. Antenna of the large BAO radio interferometer, 216×18 m in size (75 cm wavelength).

- Հայ ռադիոստորագետները մեծ մասնակցություն են ունեցել նաև ՄՄ ամենամեծ RATAN-600 ռադիոդիտակի կառուցման և հետազայում նաև դիտողական պրոյեկտների առաջադրման գործում:
- 1950-ականների կեսերին արտագալակտիկ ռադիոաղբյուրների առաջացումը բացատրելու համար Վ.Համբարձումյանի կողմից առաջ քաշվեց գալակտիկաների կորիզների ակտիվության գաղափարը, որը հետազայում տարածվեց նաև կապույտ գույն ունեցող գալակտիկաների վրա:
- Հետազայում Մարգարյանի և իր աշխատակիցների կողմից հայտնաբերվեցին ուլտրամանուշակագույն ավելցուկ ունեցող մոտ 1500 գալակտիկաներ, որոնց ճառագայթումը ուներ ոչ ջերմային բնույթ:

- Աստղադիտարանում սկսվեցին այդ օբեկտների ինտենսիվ ուսումնասիրությունները ինչպես օպտիկական այնպես էլ ռադիո տիրույթում:
- Մալումյանի աշխատանքներն էլ ընդհանուր առմամբ նվիրված էին գալակտիկաներում ակտիվության երևույթների ուսումնասիրությանը:
- Ավելի մանրամասն նրա գիտական գործունեության մասին՝
- 1960-ականների սկիզբ. Կատարվել են Գալակտիկայի հարթության և կենտրոնական տիրույթների ու միջուկի ռադիո ճառագայթման դիտումներ 32.5սմ ալիքի վրա:

- 1970թ. Մալումյանը ուսումնասիրել է ուլտրամանուշակագույն կոնտինիումով մոտ 30 գալակտիկայի ռադիո ճառագայթումը անալիզի ենթարկելով Քեմբրիջի ռադիոդիտակով ստացված դիտողական տվյալները: Ցույց է տրվել, որ այդ գալակտիկաների ռադիո ճառագայթումը 408MHz-ում չի գերազանցում 0.5 Յանսկին:
- 1970-1973թթ տպագրվել են մի քանի աշխատանքներ Սանամյանի, Դագկեսամանսկու, Կոզյուկովի, Լոնգեյռի, Տոմասոնի, Սառժենտի և այլոց հետ, որտեղ բերված են տարբեր ռադիոդիտակներով կատարված, հիմնականում Մարգարյանի գալակտիկաների դիտումների արդյունքները:

- 1974-1980թթ Սանամյանի, Մայիլյանի, Պուստիլնիկ, Տռուշկին և այլոց հետ դիտվել են 3C454.3, 3C380, 3C273, 3C279, 3C48, 3C84 քվազարների հոսքի փոփոխություններ 408MHz հաճախությունում և այլ արտագալակտիկ ռադիոաղբյուրների փոփոխություններ Ratan-600 ռադիոդիտակով 13սմ-ում:
- 1982թ. Astronomicheskii Tsirkulyar, Vol. 1247, p. 1-2 տպագրվել է On the variability of the radio emission of Markarian 421.
- Astronomicheskii Tsirkulyar, Vol. 1535, p. 9-10 (1989) A radio halo of Markarian 421.

- 1980-ականներին Ratan-600 և Պուշչինոյի ռադիոաստղադիտարանի 102 MHz ռիտակով դիտումներ են կատարվել մոտ 60 բարձր մակորևույթային պայծառությամբ օժտված գալակտիկաների և բյուրականյան դասակարգման գալակտիկաների ռադիո սպեկտրի և գույնի ուսումնասիրության նպատակով: Կատարվել են նաև 140 նման գալակտիկաների դիտումներ Վեստեռբոռնի ռադիո դիտակի միջոցով 1412 MHz հաճախականության վրա:
- Ռադիո դիտումներ են կատարվել նաև միայնակ և կրկնակի գալակտիկաների, գալակտիկաների խմբերի հատկությունների ուսումնասիրության համար: Հատուկ ուշադրություն է դարձվել խմբերում և գույգերում գալակտիկաների ձևաբանական տարբեր դասերի առկայության վրա:

- Այս ուսումնասիրությունների մեծ մասը կատարվել են Բյուրականի աստղադիտարանի ռադիոաստղագիտության բաժնի աշխատակիցների՝ Սանամյան, Փանաջյան, Կանդալյան, Հովհաննիսյան, Օհանյան և այոց հետ համատեղ մինչև 1990-ականների սկիզբը:
- 1990-ականների սկզբից Մալումյանը զբաղվել է տարբեր դիտողական տվյալների վիճակագրական ուսումնասիրություններով:
- Վերջին տարիների աշխատանքներից են՝
- Բաբախիչների կապը գերնորերի բռնկման մնացորդների հետ:
- Ցույց է տրվել, որ մեկ միլիոն տարեկանից փոքր և դրանից մեծ տարիքի բաբախիչների տարածական բաշխումը գալակտիկայում տարբեր է: Փոքր տարիքի բաբախիչները ավելի մոտ են գալակտիկայի հարթությանը:
- Ռադիո բաբախիչների ճառագայթման տարբեր պարամետրերի կախումը տարիքից:

- Պարուրաձև գալակտիկաների ինֆրակարմիր ճառագայթման կապը ռադիո ճառագայթման հետ:
- Սեյֆերտի գալակտիկաների ինֆրակարմիր ճառագայթման կապը ռադիո ճառագայթման հետ:
- Լայներ տիպի գալակտիկաների ինֆրակարմիր ճառագայթման կապը ռադիո ճառագայթման հետ:
- Վոլֆ Ռայե գալակտիկաների ինֆրակարմիր ճառագայթման կապը ռադիո ճառագայթման հետ:
- Այս աշխատանքներում ցույց է տրվել, որ կա նկատելի կոռելյացիա նշված օբեկտների ինֆրակարմիր ճառագայթման և տարբեր ռադիո հաճախություններում ռադիո լուսատվության միջև:

Շնորհակալություն ուշադրության համար!